



ԵՐԾՈՒՄ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՌՈՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԼԻՕՐ
ՅԱՐԺՐՈՒՆԻ ՄԵՆԼՍԱՆԷՆ ՎԱՐԵԳԱՅ

ԽՄԻԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԽՕՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԳԷՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ՆԵԿՐՈՒՄ

ԱՊՐԵԼ 1858 • ԹԻ • 1 •

ՎԱՆՏՈՍՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԺՈՒՅՆ
ԴՎԱՐԱԳ

1877

1877-1878

1878-1879
1879-1880

1880-1881
1881-1882

1882-1883

1883-1884
1884-1885

առ որովք հանգչէին որդիք հաւատոյ անահ եւ աներկիւղ յարձակմանէ դարանամուտ ռիսերիմ գայլոցն : Հսկող հովիւք եւ արթունք, քաղցրալուր սուլիւք Աւետարանին փողով նորածին դառներամ հօտկց 'ի յարօտ պատուիրանին Քրիստոսի : Արիստակէս, Վլքմանէս, Գրիգորիս, Յուսիկ եւ Դանիէլ որք զկնի միմեանց հայրաբարոյ առաքինութեամբ՝ եղին զանձինս 'ի վերայ հօտին Հայաստանեայց նմանեալ քաջ հովուին Յիսուսի եւ հանգոյն նմին համարձակեցան ասել առաջի երկնաւոր հանդիսադրիս, թէ « Եւ մեք եմք հովիւ քաջ : որ 'ի փրկանս հօտին Հայկայ ետուք զանձինս եւ ազատեցաք 'ի ձեռանէ մահահրաւեր դահճին դժոխսպետ » :

Օ առաջինն 'ի հանդէս Աստուածպաշտութեան ծաղկեր աճէր եւ պողաբերէր հայրանման առաքինութեամբ կրասերն Արիստակէս . որ այն ինչ յետ հրաժարիւոյ սրբոյն Գրիգորի եւ թագուցելոյ ճրագին լուսատու ընդ բրուանաւ Դարանաղեաց լերին՝ անդէն յաշտանակ գերամբարձ Աթոռոյն ամբսունայր հրաշալին Արիստակէս, եօթնաշահեան լուսով բան զարթին պոյծառացեալ 'ի միջակին Այրարատայ . առ որով, աւաղ դոյզ ինչ հազիւ ցնծալ կարացին որդիք Արամեան 'ի փայլումն գեղաճաճանչ լուսոյն . որ զամենեբումբք սփռէր ծաւալէր Աւետարանին բարոզութեամբ, փայելչազարդ կարգօք եկեղեցւոյ եւ այլ պէս պէս Քրիստոսական ճարտարութեամբ գմնացեալ աւերակս եկեղեցւոյն Հայաստանեայց շինէր եւ հապտահիմն կառուցանէր Սողոմոնեան գերահրաշ իմաստութեամբ զկնի Դաւթայ հօրն իւրոյ Գրիգորի : Անդու եւ անդադար ամրապնդ կօշկօք տիրապետ իշխանութեամբ շրջէր յամենայն սահման Հայոց, յորդորէր զհնազանդս առաւելու 'ի կրօնս Աստուածպաշտութեան եւ յանդիմանէր զտահակս հպատակիլ սիրով 'ի թեթեւաբեռն լուծ նոր պատուիրանին Քրիստոսի :

Այլ քան զի ըստ տէրունական վճռոյն խաւարն միշտ ատէ դոյան . ընդէր, զի մի յայտնեային դործք իւր թագուցեալք ընդ ստուերաւ չարութեան : Խաւարաւեր իշխանն Ճօփաց

Արքեղայոս, այն ինչ յանդիմանութեան լոյսն ծագէր անդադար ՚ի խորագոյն խորշս գաւառին իւրոյ . ետես թէ այլ եւս չէ հնար ծածկիլ գործոց չարութեան իւրոյ եւ ծանրագոյն թուէր տանել յարածամ կամ խայտառակիլ ամօթապարտ ՚ի լուսոյն յանդիմանութեան . ուստի հնարս հայթայթէր անագորոյն մօտք հատանել յինքենէ զճառագայթս լուսոյն : Ո՛վ սեւաւ աւուրն եւ անպատեհ պահուն . Արիստակէս այցելութիւն ելանէր գաւառաց, նախարարն Ճովաց ՚ի յորս երէոց, զիպեալք միմեանց երկոքին որսորդք . մինն յետ նուիրելոյ զՔրիստոսաւանդ ողջոյն սիրալիր խաղաղութեան՝ ջանայր անդէն յամայի դաշտին եւս որսալ զորսացեալն ՚ի բանսարկուէն . ուստի հեղաձայն յանդիմանութեամբ քարշեալ ըզնեան յաղեղանէ խրատուն արձակէր ՚ի նախարարն . իսկ միւսն խցեալ զականջս իւր ընդ բան ճարտար թովչիս՝ սուր ՚ի պատենից հանեալ անագորոյն ձեռօք խողխողէր զխրատատու զորսորդն . զի լռեսցի խպառ յանլուր ականջաց իւրոց քաղցրաբարբառ ձայն իմաստուն թովչին :

Երկինք, որպէս կարացեր տանել զայս, երկիր, զիա՛րդ հանդուրժեալ արբեր վարիւն Արդարոյն, որ բողբոհաց յերկնս, որպէս երբեմն վասն Աբէլի : Եւցելու արեան անմեղաց, Աստուած, իջէր արդեօք յայնժամ եւ ՚ի գաւառն Ճովաց . հարցուփորձ արարեալ խնդրեցե՞ր զարիւն սուրբ նահատակին քո Արիստակէայ . այ՛ն ըստ Մարգարէին նախասացութեան . դատաստան քո Ճշմարիտ է եւ միշտ արդար ես ՚ի նոյն : Նոքա, որ զյանդիմանիչս քո ատեցին առ դրունս Հայաստանհայց որպէս երբեմն Հրէայքն յԵրուսաղէմի մերժեցան յայցելութենէ ձեռին քո եւ անհովիւ լեալք թափառեցան յամայի լիրինս . չեղեւ ժողովող նոցին յԱստուածային քո փարախ՝ մինչեւ կուր եղեն գաղանաց եւ խպառ վատնեալ պակասեցան :

Յապարհզ Աստուածապաշտութեան յետ հարազատին քում անց եւ հանդիսացիր, ցանկալիդ վրթանէս, որ թէպէտ ՚ի կարգս աշխարհի սուրբ ամուսնութեան մտեալ . այլ կամու

վին յօժարութեամբ թողեր լքեր զտուն , զկին եւ գորգիս ,
 չոգար զկնի լուսահետ շաւղաց Վրիդորի հօրդ եւ եղբոր
 բուն Արիստակեսայ : Որ մինչ լուար եթէ չիջաւ ճրագն
 լուսափայլ յԱյրարատայ բարձրագիւր Աշտանակէն մահա-
 չունչ հողմով իշխանին ծովաց , անդէն վառեցար լուսով չքն-
 ալիս սրհիլ վսուցդ . ելեր բազմեցար հոգեւորնոր արժանա-
 ւորութեամբ ի թափուր գահն նահատակեալ հարազատիդ .
 որով կրկնակի եւս պայծառ լուցեր զՎահ եկեղեցւոյն Հայ-
 աստանեաց , նովին առսքինութեամբ հանդիսացեալ յընթացս
 արի եւ բաջ հովուապետութեան քոյին :

Ինդ մէջ ածեալ քո զհատու սուրն ճշմարտութեան՝ մտեր
 ի դրուես եկեղեցւոյ զնոյն յանդիմանութեան բարբառ կրք-
 կեալ առ ստուկանողս պատուիրանացն Աւետարանին :
 Ուշակորոյս իշխանն ծովաց անմտութեամբ կարծեաց , եթէ
 յորժամ զԱրիստակեսայ յանդիմանիչ լեզուն սպանութեամբ
 հատանիցեմ՝ գիտեմ յայնժամ , զի չգուցէ այլ ոք ինձ յանդի-
 մանիչ . համարձակ երթամ զհետ կամաց իմոց . եւ զայն ոչ մը-
 տաբերեսց : եթէ որ ասաց . « Ես եմ ճշմարտութիւն եւ
 կեանք » . միթէ մեռանիցի՝ ճշմարտութիւն , բաւ , յաւիտեան
 կայ . յաչս անզղամիտ Արքեղայոսի այնպէս թուեցաւ թէ մե-
 ռաւ . այլ յարեաւ ի վրեժանէս :

Օնոյն յիմարտութեան գինով թմրեալք լոկ անուամբ
 քրիստոնեայք հետեւողք հեթանոսական գործոց , եղին ի
 մտի փորձ մի եւս եւ առ վրեժանէսն առնել : Երբ , մինչդեռ
 շքէր այցելութեամբ եւ յեկեղեցւոյն Աշտիշատու հայրա-
 պետական զգեստովք փառազարդեալ մատուցանէր զհաշ-
 տարար պատարագն վասն մեղուցեալ ժողովրդեան իւրոյ :
 Այն ժողովրդեանն ասեմ , որ յիմար եւ ոչ իմաստուն . որ
 այնչափ ապերախտեալք մինչեւ զՀայրն Հայաստանեայց քար-
 կոծել կամէին պաշարելով զմեծ քաղաքաորմն Աշտիշատու :

Այլ ոչ յամենայն ժամ թոյլ տայ խնամակալն ճշմարտու-
 թեան . զի անկկար եւ ամբարիշտ մարդիկ սուր հանեալ եւ
 զաղեղուն լարեալ հարկանիցեն զաղբատն կամ զայն , որ

խոնարհն է սրտիւ եւ պարծիցին յանձինս իւրեանց եթէ սպանաք զարդարն , որ դժպհի կայր մեզ եւ հակառակ էր մտաց եւ գործոց մերոց : Չեռք , որ հարդերձեալ էին զամբիծ արիւն սուրբ Քահանայապետին հանդոյն Չաքարիայի առ սեղանոյն հեղուլ՝ անդէն հրեշտակահար պատուհասիւք իւրոյն կաշկանդեալ , կապեալ , կծկեալ իւրաքանչիւրոցն զբամախօք անշարժ բեւեռէին . եւ այնչափ արձանացեալք յերկրի մինչեւ զերանելոյն ոտիւք փարեալ զմեղայն գոչելով եւ խոստովանելով՝ ներողութեամբ եւ աղօթիւք սրբոյն արձակէին յաներեւոյթ կապանացն : Այսպէս երանելին վրթանէս թէպէտ ոչ իբրեւ զհարազատն իւր արեամբ նահատակէր 'ի վերայ եկեղեցւոյն Հայաստանեայց , այլ անարիւն նահատակու թեամբ յարաժամ հաշէր հառաչէր եւ մաշէր 'ի վերայ որդւոցն անհնազանդութեան մինչեւ մեռանէր ինքնին յիւրական աթոռն եւ 'ի դիր հանգստեան հարցն իւրոց դնէր 'ի թիւն աւանի 'ի Թորդան :

Սուգ առնոյր հօտն Հայաստանեայց 'ի վերայ բաջ Հովուապետին . այլ խնդային ոգիք յանդիմանեալք 'ի նմանէ եթէ լուսաց եւ կարճեցաւ կշտամբիչ լեզուն , որ յարաժամ նախատինս կարդայր մեզ , պատուհասեւ վայելեսցուք 'ի բարութիւնս , որ կանս . Պէս պէս զինեօք եւ անուշ իւղովք լցցուք . մի անցցէ առ մեւք ծաղիկ քարնայնոյ :

Իբրեւ լուգընթաց հայրաշաւիղ առաքինութեան ելանէր յասպարեղ Աստուածապաշտութեան յաշխարհն Աղուանից մանկագոյն նահատակն Գրիգորիս , նոր ոմն Դանիէլ հրաշաւէտ ողւով իմաստութեան լցեալ 'ի տղայական տիւոցն զկատարեալդունիցն յանձին բերելով զնորհ՝ արժանապէս ընտրեցաւ Հովիւ՝ ստահակ եւ ապառուժ հօտին Աղուանից . զի գէթ ամաչեցեալ պատկառեսցին արք շնաբարոյ ծերոցն . որք զառամեալ էին չարութեամբ հեթանոսական սովորութեանց եւ չկամէին երբէք մանկանալ հոգւով Աւետարանին շնորհաց նորոգութեամբ :

Ստաւարժ , մանկատիւլ՝ գաւռնարածն Գրիգորիս արթնամիտ

զարմանալի Դանիէլէն գողթէ ՚ի հրապարակս Ազուանից աշխարհին իբրեւ ՚ի Բաբելոնի կացեալ բողոքէր ուժգին ձայնիւ յաղագս ամբարշտութեան անառակեալ ծերոցն , որք զՔրիստոսական սուրբ եւ անբիծ կրօնիւք ծաղիւ արարեալ իբրեւ զանմեղն Շուշան ՚ի մահ դատապարտէին անժուժաբար յարձակելով յառաջատ անարատ հարսին եկեղեցւոյ ։ Դիմագրաւ կայր նոցին միշտ քաջն Գրիգորիս , հաւազանաւ հոգեական իշխանութեան իւրոյ հանապազ հարկանէր եւ յանդիմանէր զխտութիւն անգեղջութեան դարչասէր եւ խողամիտ բարուց նոցին ։ Իսկ այժեքամ ջորիք աշտամբիցն զտրամտութիւն Հերովդէսի կրեալ յոգիս դարձան ամենեքին կատաղացեալ զայլք ։ Եւ յարձակեցան ՚ի վերայ մանկաղոյն հովուին իւրեանց անդ ՚ի Ատոնեան դաշտին Կատաղիական ծովուն յեղէրս . ուրանոր արածէր զնոսին յարօտս Աստուածային բանիցն քարոզութեան ։ Տեսէք եւ ՚ի միտ առէք ամտանոր , Հսկազուն իշխանք , թէ բանի՞ անօրինակ յանդգնութեամբ ձեռք սրիւն բուռչտ հիւսիսական իշխանաց առաւելքան զհրէականացն մերձեցան յօժեալն Աստուծոյ ՚ի Գլորիոյրիս Հայրապետն , մինչեւ կապել զերանելին ընդ ադի խլրոխտարչաւ ամենհի ձիոյ ընդ քար ընդ մայառս զետնաբարչ հարկանելով՝ սպառա սպառա բիւրամասն եղեւ մարմին խաչազգեսաց հովուին մինչեւ չմնալ խայծիկ մի ։

Ի՞նչեւ էր քակ անասնարարոյ անդգամացն այնոցիկ տղայիք զժնդակ վախճան տալ Հրեշտակատիւց մանկանն Գրիգորիսի Առաքելոյն իւրեանց ։

Այլ մի եւս հայեր ընդ ապաժոյժ տեսիլ արիւննաշաղախ վատնեան դաշտիւ , Արծուիդ իժ , Թաւր սցտի եւ էջ կրկնակի ՚ի Քաւառն ծովաց , ուր ՚ի դատառակի թեւոց նկարեա եւ զհանդէս նախանձաւոր Աստուածաշառութեան հարազատին Գրիգորիսի Յուսիպ ։ Գողթէ երկոքին միասնունդ աղանիւր ուխտիւ երդուեալ էին միաբանութեամբ մեռանել ՚ի վերայ եկեղեցւոյն Հայառտանեայց , զի կենդանի մնացէ հաւատն Քրիստոսական ։

Տիրադրութիւն այն Տիրան Թշնամի հայրենի եկեղեցւոյն, որ կամէր անարի վատաստութեամբ զուրացողին Յուլիանոսի դիւազդեաց սեւանկար պատկեր մուծանել 'ի Տիրական տաճարն եւ 'ի բեմին բազմեցուցանել փոխանակ լուսադէմ փրկչական պատկերին : Նոր ոմն Մանասէ երեւեալ եւ 'ի Հայաստան յանդգնեցաւ զհոգին Աստուծոյ հալածել յիւրաքնակ խորանէն եւ դաւանել ընդ նմին զանձն բելիարայ : Անդ համարձակախօս յանդիմանիչն Եսայիաս կշտամբելով զՄանասէին դիւապաշտութիւն սղոցեալ լինէր ընդ մէջ . իսկ աստ հայկազն Յուսիկ նոր Եսայիաս եւս համարձակագոյն դտեալ զդիւադէմ պատկեր ամբարշտին Յուլիանոսի յափրշտակեալ 'ի ձեռանէ պաշտողին Տիրանայ, առ ոտիւք ընթացրեալ մանրէր եւ փշրէր ըստ գուշակման Դանիէլի . ինքն եւս իբրեւ վէմ անձեռաշարժ Աստուածային իմն սրտմտութեամբ 'ի լեռնէն Քրիստոսական եկեղեցւոյն վայրահոսեալ հար եւ խորտակեաց զնորոյն Նաբուգոդոնոսարայ պղծոյն Յուլիանոսի պատկեր :

Եւրանի Թէ եւ աստ հանգոյն խոնարհաժիտ Աստուածապաշտին Թէոդոսի հեղանայր ողւով ընդ առաջ մերոյն Ամբլոսիոսի սրբոյն Յուսկայ եւ յանձն առնէր զարժանաւոր ապաշաւանս 'ի խորդ եւ մոխիր : Աւաղ, ոչ այսպէս, այլ գաղանային կատաղութեամբ 'ի բարկութիւն բրդեալ անդէն հրամայէ զլունչ վերջին հարկանել ջալոտիւք մինչեւ Թոպամահ լեալ մեռանէր Երանելին եւ բարձեալ լինէր 'ի սպասաւորացն եկեղեցւոյ 'ի շիրիմ նախահարց իւրոց :

Հասիր աւասիկ, ծերունիդ Դանիէլ, հիւպերիտ մեծին Գլիգորի, այսր սլացիր 'ի ճգնարանէդ Հացեաց դրախտին . լուեաց ոհ, եւ չորրորդ յանդիմանիչ լեզուն եկեղեցւոյն Հայաստանեայց . դիւամեծարն Տիրան կամի ահա ընդ Քրիստոսի զՅուլիանոս պաշտել . հասիր արծուօրէն եւ ցոյց աստանօր եւ զբոյդ հանդէս Աստուածապաշտութեան .

Ապիտակափայլ շքեղ ալեօք բարեգարդեալն Դանիէլ, Թէ պէտ ճիւղասուն կենցաղաւարութեամբ մաշեալ եւ զառա-

մեալ մարմնով. այլ գերքան զՆդիա եւ գԴանիէլ վառեալ եւ երիտասարդացեալ Տոգւով Աստուածային նախանձաւորութեան անդր հասներ իբրեւ հրաւիրեալ յաթոռ հայրապետութեան նահատակելոյն Յուսկայ. սակայն մեծարմբ պատուոյ գերագոյն աստիճանի փառաւորութեան՝ չկարացին երբեք զՃերուռոյն սրտմտութիւն ՚ի մարդահաճութիւն կեղծաւորութեան խոնարհեցուցանել: Հապա բանայր անդէն դերբան յանդիմանութեան, կշտամբէր եւ նզովէր զանագորոյն տիրապանութեան գործս ամբարշտին Տիրանայ. կսպէր եւ կաշկանդէր ՚ի կապանս պատուհասապարտ անիծից. զառեալ եւ որոշեալ յեկեղեցւոյն Բրիստոսի: Այլ որ սովորեալ էր արիւնըռուշտ բնաւորութեամբ զՏոգուապանութեան գործս, հրամայէր անդէն զչուան ընդ պարանոցն կապողին իւրոյ արկանել եւ այնպէս խեղդ աշունչ անարդա հազ զբաւել զերանելին ՚ի կենաց եւ շիջուցանել միանգամայն զերկոսին չահս լուսաւորս ՚ի Հայաստանեայց եկեղեցւոյ: Որով եւ ինքն զարժանահաս պատիժն ընկալաւ Աստուածուծտ անտի խաւարեալ երկորումբ աչօք: Վայել էր իսկ այսպիսեօք զհատուցումն ընդունել իստ առածին Սողոմոնեան թէ. « Որ սւնարդէ զհայր, բիբբ աչաց նորա խաւարեային »:

Խորք բազումք են իրաւունք Աստուծոյ եւ ճշմարիտ են նորա անքննելի զատաստանք. Տիրան՝ որ զերկոսին Հարս հայապտանեայց եկեղեցւոյ մերժեաց անարգամահ սպանութեամբ. մերժեցաւ եւ ինքն խաւարաբիբ աչօք եւ որ ընդ խաչաբանրձ եւ Բրիստոսի քաղցր լծոյն կրող պարանոցն արկ ՚ի խեղդ զպարան. չափեցաւ նոյն պարանաւ եւ պարանոցն իւր հեղձամահ լեալ յիւր իսկ յարքայորդւոյն Արշակայ:

Այս է վախճան ահա, որ զսուրբն Աստուծոյ չարչարանօք եւ մահուամբ հանին յաշխարհէ աստի. այս է բաժին ամբարշտաց. որ ոչ կամեցան առնուլ զօրհնութիւն հայոցն եկեղեցւոյ. այլ անիծից եւ նզովից արժանի լեալք կորեան եւ խափանեցան յերկրէ ՚ի կեանս իւրեանց. որոց յիշատակ ոչ օրհնութեամբ կամ գովութեամբ. հապա պարտաւանօք եւ անար-

գումթեամբ այսպէս արձանագրեալ հռչակին 'ի մատենա գաւրուց 'ի դարս :

Աստանօր 'ի յուշի եկեալ 'ի խելագարութենէ ամբարիշտ նախնեացն՝ մի իբրեւ զնոսին ընդ եկեղեցաշէն Աստուածապաշտս մաքառիցիք : Մի զօրէն Արքեղայտի իշխանին ծոփաց սուր հանելով յարձակիցէք 'ի վերայ հովուացն եկեղեցւոյ : Մի նման Սիսակեան հեթանոսակրօն նախարարացն 'ի պատճառս պաշտելոյ չաստուած հեշտութեան , զյանդիմանիչ մանուկն Գրեգորիս սու ոտիւք խստերախ ձիոց իշխանութեան ձերում ընթադրեալ դառնամահ սպանանիցէք :

Մի որպէս զվատասիրան Տիրան երկուցեալ յիշխանութեանէ աշխարհիս այսմիկ զԲրիտտոսական սուրբ կրօնն ընդ արքայական թագին փոխանակեալք եւ այնչափ զայրացեալ ընդ իրաւացի յանդիմանութիւնս եկեղեցաշէն հովուացն , մինչ զի զոմն ջալտից սաստկատանջ հարուածովք ջախջախիցէք . զոմն սրախողխող զճանապարհաւ արկանիցէք եւ զոմն դժընդակագոյն եւս մահուամբ ընդ ամբակս արշաւասոր ձիոց կոխոտելով զոսկերսն անգամ մանրամասն փշրիցէք : Մի եւ մի երբէք լիցի ձեզ ամբարտաւանիլ 'ի վերայ իշխանութեան եւ զօրութեան անձանց ժպրհիցիք ըստ օրինակի տիրադրութեան նախնեացն յօժեալսն Աստուծոյ ձեռն մխել , ոչ միայն սպանութեամբ , այլ եւ մի պէս պէս հարուածովք վերաց . մի արհամարհանօք , մի չարալնգու լուտանօք , մի քու բանասրկութեամբ , մի բանիւք զրպարտանաց , մի խորամանկ խաբէութեամբ : Մի նախանձու կրիւք մոլեղնեալ ստելութեան ատամամբ խածատիցէք զայնս , որ անձնանուէր առաքինութեամբ յաղագս յառաջանութեան Արամեան աղգին եւ եկեղեցւոյն Հայաստանեայց զօրհանապաղ անդուլ սշխատութեամբ վաստակին : Մի դարանս զնիցէք ոտիցն , որ այցելութեամբ ջրջին կրկին շինել եւ կառուցանել զվաղեմի զաւերակս հայկազանց : Մի եւ դուք զՀրեական բանս 'ի դէմս բերելով պատասխանիցէք . « Եթէ էաք յաւուրս հարցն մեկոց ոչ հաղորդէսք արեան մարգարէից » . մի գուցէ այսու

ստուգապէս վկայէք զանձանց , եթէ եւ դուք հարազատա-
ծին սերունդք էք այնոցիկ , որք կոտորեցին զընտրեալս Հայաս-
տանեայց եկեղեցւոյ :

()Ն հապա մի լինիք որդիք այնպիսեացն , որ զսուրբսն
Աստուծոյ չարչարեցին . այլ մանաւանդ նզովիւք եւս 'ի բաց
մերժեցէք . թողէք զազգատեաց եւ զտիրասպան նախնիսն
զՏիրան , զՊապ , զԱրշակ զԱբբեղայոս , զՎահան , զՄեհրու-
ժան . հետեւող լերուք առաքիլնեացն , Տրդատայ , Սմբատայ ,
Աշոտայ , Մուշեղի , Վարդանայ , Վահանայ եւ այլոց եկեղեցա-
պաշտպան նախնեացն : Որով իբրեւ զնոցուն եւ ձեր յաւէր-
ժացի յիշատակ հանդերձ գովութեամբ իբրեւ 'ի խորենեան
մատեանս եւ արդ 'ի թեւ Արծուոյս :



Բ . ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՅՆ

ՆԱԽԱՊԱԿ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱԳԱԿԱԼ

ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ ՊԱՐՈՅՐ :

Որպիսեօք խորենեան ծերոյն եւ ինձ ցանկալի է յոյժ
աստանօր 'ի սկիզբն առնել ճառելոյ զմերս նոր թագապսակ
եւ արքայապանձ հայկազնոյն Պարոյրայ . զորմէ յարմարագոյն
թուի ինձ ստել , նոր կենդանութիւն թորգոմեան ազինս , նոր
փեսայ պտտեալ 'ի զարդ փառաց եւ ճոխութեան ընդ նա-
զելոյն Հայաստանի , նոր արքայ Հայկազուն բազմեալ 'ի դահն
Արարատեան , մեծափառ պերճութեամբ քան զՄասիս բարձ-
րացեալ : Երջանիկ գտաւ սա քան զղիւցազն Հայկ , քան
զքսջն Արամ եւ քան զառաքիլնին Արա . որ առաջինն եղեւ
պսակիչ հայրենեայ արքայանուն վերտառութեամբ :

յ) ինչ գովանի ձիրք վեհանձն բարուց քաջին Պարոյրաց արժանապատի գլխոյ նորին Թագ բոլորեցին ականակուռ կիտուածովք. եթէ ոչ մեծախորհուրդ խոհեմութիւն մտացն. արիական քաջութիւն սրտին, հայրենաշէն յօժարութիւն կամացն, կրօնաշարժ յաջողակութիւն բազկացն, հաւատարիմ սատարութիւն դաշնակցին Վարդակեսայ :

Լստ ահա ընդ աշխոյժ սրտին վիպագրին Մովսէսի՝ եւ Արծուոյն գլխարձանայ սկիւտ. յորժամ աստի սկիզբն էառ. Հայկազանց նոր Թագին արեւ իբր ընդ արշալոյս ծագելով ծիրանափայլ ճողագայթել 'ի կամարին Այրարատայ. Ընդ որոյ 'ի գեղ զմայլեալ արծուաբիւր աչացն Խորենեան ծերոյն՝ ով խանդակաթ փափագանօք ըղձանայր 'ի սրտին եւ գրէր ցանկանալով. « Սիրելի էր ինձ յայնժամ գալ ժրկչին եւ զիս գնել եւ առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել եւ նոցա տեսութեամբն խրախճանալ եւ յարդեացս վտանգից ապրիլ : Այլ վաղ ուրեմն փախեալ 'ի մէնջ պատահումն այն, թէ արդեօք եւ վիճակ » :

Հայկազն ուսումնասէր, 'ի վերձաներդ քո զայս տխուր բան, ոչ արդեօք բան զառամեալ ծերոյ վարկանիս կամ վարկապարտի հառաչանք սրտից. ոչ, այլ յոյժ հանճարաւորի եւ վսեմախորհուրդ իմաստնագունի բանք : Որպէս, հայրենեաց ազատութեան եւ փառաց փափագող ոգին. այն ինչ ընդ հայելն իւր ընդ պայծառութիւն շողշողման Թագին Հայկազանց, բաժն եւ մերս ծերունին հոգւով ցնծացեալ հանդոյն Սիմէօնին գոչէր. ուր ես, փրկիչ, եկ աւասիկ, ընդ զգալի նորափայլ Թագին Հայկազանց՝ ով ցանկալի է ինձ եթէ եւ լոյսդ իմանալի ծագէր 'ի վերուստ. որով 'ի խրախճանալ ինձ առ բնիկ եւ հաւաստի հարազատ սերնդոց իմոց Թագաւորութեամբ՝ խրախճանայի եւ առ մշանջենաւոր ազատութեամբ փրկչիդ աշխարհի :

Խորենեան ճշմարիտ հայրենասէր սրտին եւ չնաշխարհիկ ոգւոյն վայել էր իսկ այսպիսի իմն հրավառ տխրութալից տենչանք. որով ընդ ազատութեան Աւետարանին լծորդ եւ կամէր

եւ զհայրենեացն ազատութիւն եւ 'ի նոսին ապա զերջանիկ զինքն վարկանելով՝ ազատ մնալ 'ի վերահաս վտանգէն , այն է բարձումն թագաւորութեան Արշակունեաց եւ գօսանալ գաւազանին Բահանայապետութեան 'ի տանէն Գրիգորի Պարթեւազնին :

Երանի լինէր Հայոց աշխարհին բովանդակ եթէ Պարոյրն եւս ընդ թագաւորութեան աշխարհիս՝ պսակեալ լինէր եւ Բրիտտոսական անթառամ թագիւ , որպիսեօք Աստանդիանոս , քաջն Տրդատ եւ թէոդոս : Բայց այս՝ վաղ ուրեմն հեռացաւ 'ի բախտէն Պարոյրի եւ ցանկացող Խորենացւոյն :

Աստանօր քաջ 'ի միտ առ , Հայկազն ընթերցող , եթէ քաղաքական հայրենաշինութիւն , ընդ նմին եւ հօր . գաւազանն իշխանութեանն՝ բնաւ չեն հակառակ Աւետարանին գերագոյն իշխանութեանն . որ կարծի թէ , զնուաստութիւն , եւ զստրկութիւն իբր նախամեծար առնելով՝ պարսաւէ զիշխանութիւն եւ զթագաւորութիւն աշխարհիս այսորիկ . այլ մաւ նաւանդ զըրաւոր ձեռն օժանդակութեան եւս լինի , որպիսեօք մեծն Աստանդիանոս՝ Սեղբեստրոսի եւ հակոյն Տրդատ՝ Գրիգորի : Յոյժ անմտանան պակասամտքն , որ զտիրող իշխանութիւն թագին եւ զարքայական պերճութիւն փառաւորութեանն , նուազումն եւ վտանգ համարին դոյ Բրիտտոսական կրօնին եւ եկեղեցւոյ : Այս վտանգ մեծ եւ անհնարին , յորժամ յաթոռս ժանտից բաղմիցի իշխանութիւնն եւ ունիցի գաւազան բռնութեան , եւ 'ի գլուխ իւր լոկ թագ մի փառասէր հպարտութեան եւ ոչ վարկցի արդարութեամբ եւ իրաւամբք օրինաց ըստ Սողոմոնեան խրատուն . կամ զոյդ ընդ հօր իշխանական քաջադործութեանցն չունիցի եւ զհանդէս Աստուածապաշտութեան . որովք իբրեւ յաջ եւ յահեակ երկորումք զինուք սպառազինեալ յաղթող հանդիսասցի 'ի վերայ թշնամեաց իւրոց :

Ղաւարուք Հայկազուն իշխանք եւ 'ի միտ առէք , ընդ հայրենապսակ առաքինութեան հանդէս քաջին Պարոյրայ նախանձաւոր լերուք . որ այժմիկ զինուորեալ կան 'ի ձէնջ բազումք

առ դրունս զանազան ազգաց եւ թագաւորութեանց . ջանա-
ցարուք քաջարի գործոց բարեմասնութեամբ հաճոյ եւ սիրելի
լինել . որ այս իսկ է սեփհական ձիր հայկական ոգւոյն պատ-
ուել զհաւատարմութիւն 'ի մեծամեծ գործս . որով եւ ար-
ժանի հանդիսանալ պերճապսակ թագին Պարոյրայ :

Եւ արդեօք , եւ երբ , զի վեհանձնական ձեռք այժմեան
հզոր վարբակիսեանց աննախանձ ոգւով հիւսեցեն պսակս
արժանաւոր գլխոց հայկազն իշխանաց մերոց իբրեւ 'ի վարձ
տրիտուր նոցին հաւատարիմ պաշտօնատարութեանց : Ընդ
այդ զի է բեզ Արծուիդ իմ հառաչել եւ հեծել կամ այդ
պիտում կորուսեալ բախտի յապա ժամանակս սպասել . ոչ ահա
վեհանձնագոյն ձեռք Օսմանեան հզոր պետութեանն սկսեցին
պէս պէս աստիճանական պատուոյ նշանօք պսակել զգլուխս
հայկազն իշխանաւորաց մերոց : Սեցցեն ուրեմն հզոր զօրու-
թեամբ Ձեռք պսակադիր , յաւերժացին 'ի պատիւ նորանոր
եւ Գլուխք հաւատարիմ Հայկազանց :

Գ . ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄԵՆԱՍՏԱՆԱՅ ՎԱՐԱԳ
ԵԿԵՂԵՅԻՔ

(Երանանիւթիւն 'ի 21 . 53 .

77 . երեսներն քիւն :)

Ասոր հարաւային կշտի հետ կպած է Սուրբ Սոփիա կամ
բերդաւոր վեցերորդ եկեղեցին , որոյ ողորմելի տեսարան
հայրենաւեր սրտեր յարեան 'ի ծով կը ներկէ :

Սոյն տաճարիս արեւմտեան ճակատի լայնանիւտ կոկիւղոյ
քարերուն վրայ այս սխրալի Արձանագրութիւնս կը կարդա-
ցուի :

Ն. Լ. ԹՈՒԻՆ ՀԱՅՈՅ :

ԵՍ ԽՈՒՇՈՒՇ ԽԱԹՈՒՆՍ ԴՈՒՍՏԻ ԳԱԳԱՅ ԱՐՔԱՅԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆ-
ԻՈՅ, ԿԵՆԱԿԻՅ ՍԵՆՔԵՐԻՄԱՅ ԱՐՔԱՅԻՆ ԱՐԹՐՈՆԻՈՅ ԶՏԱՃԱՐՍ
ԶԱՅՍ ԿԱՆԳՆԵՑԻ :

Եւս սուրբ տաճարս զիտող եւ ուշի ուշով նկատող անձին
ամէն կողմանէ տրտմալի առարկաներ կը բարեւեն . կը նայիս
որ՝ մէկ կողմանէ կիսակործան մեծագործ Տաճարն Արտաշէս
տիեզերակալին նման՝ աւանդ փառացս անցաւորի կը գոչէ ,
միւս կողմանէ երկնանման կամարներուն գետնի վրայ ապա-
ժոյժ թաւալիլ՝ քարացեալ սրտեր ՚ի լաց կը շարժեն . մէկաւ
կողմանէ՝ փոխանակ քաղցրաձայնի դալրաց եւ ժամասեր կրօնա-
ւորաց թռչնոց կրկայլց բազմութիւնը կը տեսնէ , որոնք սղալով
ճշարով եւ ճունչելով ել եւ մօտ կընեն :

Ո՛հ, Արտաշէս Արշակունի . քաջայաղթ թագաւորին մասն
ողբացող լալական կանայք հոս կանչելու է , թէ հայրն ողբա-
սացից Երեմիաս մարգարէն . որ զայ եւ իւր սղահնչակ քնարն
լարած սկսէ ողբալ ըսելով . « Ընկեցեալ կործանեցաւ պարիսպ
դստեր Սիօնի . չափ արկին եւ ոչ անդրէն դարձուցին զձեռս
իւրեանց , սուգ առին մահալձանք , եւ պարիսպք առհասարակ
դողացեալ կործանեցան » :

(1) Ի՞նչ վկայութիւն վկայեցից քեզ . կամ զի՞նչ
նմանութիւն նմանեցուցից քեզ , դուստր Երուսաղէմի . ո՞վ
մխիթարեացէ զքեզ դուստր Սիօնի . զի ծանրացաւ բաժակ
բեկման քոյ՝ իսկ ո՞վ իցէ , որ մխիթարեացէ զքեզ » : Երեմ.
Բ . 13 : Եւս եւ ասկէ աւելի եղանակաւ լալու եւ ողբալու
ժամանակ , աչքս վեր առած կը տեսնեմ , ի՞նչ՝ գիտես թէ
ինքն խուշուշ թագուհին՝ նոյն հաստակառոյց կիսափուլ պա-
րսպին կռթնած , եւ տրտմութեան տխրալի քօղով մը իւր նա-
զելի դէմքն ծածկած սկսաւ բարբառել այսպէս :

Եւս որ Բագրատունի մեծալայելուչ գահէն խաղաղու-
թեան՝ միութեան եւ սիրոյ պատճառաւ Արծրունի Սենեքե-
րիմ թագաւորին հարսնացայ , եւ բոլոր Վասպուրականաց

Թագուհի կոչուելով՝ Ոստանայ լեռան ծայրի կապանին վրայ՝
Մանուէլ ճարտարապետի հանձարով՝ զրուատեալ ամենա՝
դեղ ծովահայեաց պալատին իսկական վայելող յատկացայ ,
բնաւ այդ ճոխութիւններ եւ ըստ մարմնոյ փառքեր առ
ոչինչ դասելով , մեծաւ սիրով 'ի խնդիր կացի յարմարաւոր
եւ զուարճալի տեղի մը , որն որ՝ այս վարագայ վեհալայրս զը-
տայ : Այս տեղ հիմնարկեցի , այս տեղ ցանկացայ կանգնել
այն տաճարը , որուն յիշատակ 'ի Հայաստան եւ ոչ մէկ քաջա-
յաղթ Թագաւորէ մը կամ շինարար հայրապետէ մը մինչեւ
հիմայ թողաւ : Հոստեղ կանգնեցի այս (Սոփիա) տաճարս ,
որուն յիշատակութիւնը անջինջ մնալով յաւիտեան Հայկե-
րամ մանկտեաց սրտի մէջէն , իմաստութեան , բարեկարգու-
թեան եւ ուղղութեան հետամուտ լինին . առե՛ն եւ հալածե՛ն
տգիտութեան հայրենաւեր ոգին եւ ինքն իսկ տգիտու-
թիւն գլխովին :

Եւս կարծէի որ իմաստութեան հետեւողներ շատ ասոր նը-
ման իմաստութեան տաճարներ եւս պիտի շինէին Հայաստա-
նիս ամէն կողմեր . բայց աւանդ եւ հազար եղուկ . որ փոխա-
նակ շինելով՝ իմ անմահ կարծած յիշատակս անգամ չկրցան
հաստատուն պահել :

Փշաւ կործանեցաւ իմաստութեան անուամբ կանգնուած
տաճարս , անգութ ժամանակն իւր գազանային ժանեաց կե-
րակուր ըրաւ ասոր չքնաղ տեսութիւնը , որ վերջին շունչն
հասած կը հեծէ , կը մոլորէ , կը հեծեն եւ բոլոր իմաստու-
թեամբ լուսաւորեալ մտքեր ինձի հետ 'ի լաց կը հրաւիրեն :

Ըրգեօք չըլլայ , որ իմ տաճարիս պէս իմաստութեան եւ
գիտութեան ոգին ալ փլած եւ 'ի մահ կործանած լինի Հայ-
ստանիս մէջ , ո՛հ անշուշտ՝ եթէ կարծիք ըրածիս պէս յիրա-
ւի կենդանի եւ 'ի զարգացման մնացած լինէր՝ իմ տաճարս
այս մեռելատիպ տխուր տեսարանը իւր վրայ չէր առներ . եթէ
'ի զարգացման լինէր՝ Հայաստանիս շատ դաւառներ իմաս-
տութեան տաճարներ շինուած էին , ուրեմն իսկապէս մե-
ռած կերելի . իսկ եթէ որ կենդանութեան յոյս կայ ինչպէս որ

կը կարծուի, քնն ուրեմն, ուղեւոր, ձայն տալով արթնցուր իմ սիրազուն հայրենակիցներս. սոյն կիսակործան տաճարիս ուղորմելի տեսարան նկարագրէ անոնց հայրենակարծտ աչքերու դիմաց, որ այս իմաստութեան յիշատակ չորեքօրեայ մեռեալ Ղազարու նման ՚ի փառս իւր առաջին ճոխութեան վերանորոգեն. մանաւանդ իմ հասակակից Հայկազուն տիկնանց եւ օրիորդաց տար այս իմ արտառուչ ձայն, թող անմահ սիրովն վառված իմ հայրենի Վասպուրականիս սիրտը իմաստութեան փառաւոր տաճարի մը յիշատակ անջնջելի պահեն : Տասն եւ ինն երրորդ դարու Հայկազուն տիկնանց եւ օրիորդաց անուամբ թող անմուտայ մնայ սոյն յիշատակ Վարդայ սուրբ եւ Աւագ Նշանիս առջեւը :

Այս արամայի տեսարանէս զինի կը մնայ փոքր ինչ տեղեկութիւն սուրբ Սիօն եկեղեցւոյն վրայ, որուն յիշատակ բնաջինջ վերջացած է հիմայ, վասն զի սակէ ութ տարի առաջ ասոր կաթողիկէն իւր մէկ կողմի պարսպին հետ փլելուն համար, տեղն ցորենի ամբար շինուեցաւ՝ սուրբ Սոփիա եկեղեցոյն քարերով :

Դրախտ ըսուած այգին նոյն հնաշէն տաճարաց ետեւ արեւելեան կողմն կիյնայ բարձր աղիւսահիւս պարսպով շրջապատած, ունի շատ մը ծիրանի եւ տանձի պտղաւետ ծառեր, իւր յատակի մեծ մասը առուններուն եզերքներ զմայլեցուցիչ մանուշակներով զարդարուած է, որ գարնանային եղանակին գիտես թէ անմահութեան բուրմունքներ կընծայեն զգալի հոտոտելեաց :

Սե՛ծ ցանկապատ այգին վանուց հեւփսային կողմն կիյնայ դէպ արեւելք տարածուած՝ որ շատ պտղատու ծառերով եւ բազմաբեր որթերով զարդարուած է : Վերին աւաղան եւ վարդապետաց աղբիւրներ ըսուած երեք անմահ վտակներով իւր ծարսուն կը զովացնէ ամառնային արեւակէզ ժամանակին, որով եւ շատ ուխտաւոր հիւրերու վարսադեղ հովանոցներ կը կազմուի զուարճալի երկայնարաջ ուռենիներ, ընկուզենիք եւ տնայկաւոր տունկեր անուցանելով :

Դ . ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՆՑ

ՀԱՆՐԵՍ ՄԱՐՏԻՑ

ԱՐԻԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՆ

Թէ որ դիտենք տիեզերաց ընդհանուր էակները, կը տեսնամք, որ ամէն մէկն ալ իրենց բնութեան ներհակող թշնամիութիւնն ունին . որով միշտ զիրար կը մնասեն : Ինչպէս որ կրակին զօրութիւնը բոլորովին կայրէ բամբակին փութը եւ կակուղ բնութիւնն : Բայց, միթէ կրակն անվանելի եւ միշտ յաղթող կը հանդիսանայ . ոչ բնաւ . վասն զի իր այրիչ զօրութիւնն ալ ջուրէն կը շնջանի ու մոխիր կը դառնայ . նմանապէս ջուրն ալ նոյն իսկ կրակէն կը մնասի . կաթսայի մէջ սաստիկ եռալով կը շուրջանայ եւ օդին մէջը ցնդելով կ' ողնջանայ :

Եւ յայտնաւ ալ առաքինութիւնն ու մոլութիւնը իբրեւ ներհակ արարածները միշտ կը մարտնչին իրարու հետը . կը նմանին երկու ճակատամարտ ահեղ բանակներու . միշտ կը զարնուին իրարու հետը ապաժոյժ արեան ճապաղիւններով աշխարհիս դաշտերու երեսը կարմիր կը ներկեն : Շատ անգամ ալ մոլութեան բանակին զօրավարը յաջողութիւնը գտնալով իր յաղթութեան դրօշակը կը կանգնէ հպարտութեան ձողին ծայր . բայց եւ դարձեալ իվերջայ կը յաղթի առաքինութեան բաջմարտ ու հզօր բանակէն : Վասն զի առաքինութեան ղէնքը անպարտելի է . թէպէտ շատ անգամ պակասամիտ մարդիկ կը կարծեն թէ առաքինութիւնը մոլութեան երեսէն յաղթուելով նկուռն եւ անզօր կը դառնայ : Մեք հիմա այս երկու տեսիլ անհաշտելի թշնամեաց ուրիշ բանակներ թող տանք միայն երկու դիւսաւոր մշտամարտ բանակներու կոիւր նկարագրերնք համառօտութեամբ ու իբրեւ պատկեր բերենք

ընթեր-ողաց աչքին դիմաց . որպէս զի սուր մտքով զննեն ու
հանգիստես ըլլան այս մշտնջենաւոր մարտնչող բանակաց :
Որք են այս երկու գլխաւոր թշնամեաց հռժկու բանակները .
եւ ո՞ւր կազմուած են եւ երբ սկսեցին պատերազմ հանել ի
րարու դէմը :

Հարցանել պէտք է, ո՞վ էի գիտեր , որ Արդարութիւն եւ
Անիրաւութիւն իրեւ երկու անհղ բանակներ կը ձեւանան
աշխարհիս վրայ . եւ իրենց մեծակումբ զօրքերը տխրեցրաց
չորս կողմը տարածուած են . ասոնց պատերազմին սկիզբն կու
ղես իմանալ՝ դրեթէ աշխարհիս ստեղծմանէն յառաջէ :
Մինչդեռ Արդարութիւնը երկնից բարձր աթոռին վրայ բազ
մամ իւր ամենաբարի կամաց արարչագործութեան վճիռ
ները կը հաստատէր , կը նայիս որ նորաստեղծ սպասաւոր մը
որ աթոռին դիմաց կեցած զօտի անծելով կը պաշտէր զինքն .
յանկարծ անիրաւութեան զէնքերով կսպառաղինի . հպար
տութեան բարձրայօն աչունները դարձուցած դէպ 'ի Արդա
րութեան աթոռը՝ կը խօսի գողողութեամբ . « Ես ալ իմ ա
թոռս պիտի դնեմ Աստուծոյ նման ամպերուն վրայ , ու հա
ւասար ըլլամ Բարձրելոյն » :

Այս է ահաւասիկ առաջին անիրաւութիւնը . որ այսօրինակ
ամբարտաւանութեամբ կը խօսի պատերազմ բանալ Արդարու
թեան դէմը : Բայց այս առաջին նուագ կը յաղթահարի Ար
դարութեան զօրաւոր բանակէն . ու սպառնալից բարկու
թեան պատուհասով երկնից բարձրութենէն մինչեւ դժոխոց
խոր անդունդներ կիջնայ իր կամակից զինուորներով : Բայց
մի թէ այս առաջին զաւազանին հարուածով ապստամբ անի
րաւութիւնը խաղաւ կը յաղթահարի, ոչ, հապա վերստին դը
ժոխոց մէջը գտեանը կը կազմէ . կը խրախուսէ իր չար կամա
րարները . որպէս զի կրկին անդամ արդարութեան դէմ պա
տերազմ բանան . եւ թէ որ մինչեւ երկինքը կարող չեն յալ
ձակում ընել : Գոնէ երկրի վրայ Արդարութեան սիրելի ծա
ռաներու վրայ յարձակին : Ո'արշաւեն մինչեւ դրախտին
պարիսպը եւ օճանման սողոսկելով ներս կը մտնան , ու ասպա

կերով կը գերեն երկու նորաստեղծ Աստուծոյ սիրելի ծառաները :

Արդարութիւնը՝ չեմ գիտեր ի՞նչ դազանի դատաստանաւ իր անպարտելի զօրքերը ետ կը բաշէ անիրաւութեան բանակի ճակատէն . եւ մինչեւ ցլեց հազար տարիի չափ՝ կ'արծես թէ արդարութիւն իսպառ յաղթուելով երկնից աշտարակին մէջը պաշարուած կը մնայ իր ամենայաղթ զէնքերը պատեաններու մէջ ամփոփելով կը թագուցանէ : Այնուհետեւ արեւ ձակ համարձակ անիրաւութիւնը իր բոլոր սեւագունդ աս-ձակ համարձակ անիրաւութեան սահմանները . կը գերէ պատակները կը սփռէ արդարութեան սահմանները . կը գերէ կողպատէ անոր ընտիր ընտիր ստացուածները ու ցորենի նման զանոնք դժոխոց խոր ամբարներու մէջ կը շեղչէ : Վաշ կը սէ , իմ մեծ զօրութեամբս Արդարութեան յաղթեցի եւ պիտի յաղթեմ մինչեւ յաւիտեան :

Իայց Աստուծոյ գազանի դատաստանին սահմանը երբոր կը լրանայ՝ կը յայտնուի ու կերեւայ Արդարութիւնը երկինքէն . ու Գողգոթային լեռան վրայ իջնալով իր բանակատեղ կը յօրինէ եւ կրկին ճակատ կը յարդարէ դժոխապետ անիրաւութեան դէմը : Երբոր իւր կորովի բազուկներ այն օրհնեալ փայտին վրայ իրբեւ դրօշակ կը տարածէ՝ կը սարսուտի անիրաւութիւնը եւ դժոխոց մութ խորշերուն մէջ կ'ապաստանի : Արդարութիւնը կը կանչէ ետեւէն ահեղ ձայնով . ո՛ւր է , մահ , յաղթութիւն քո , ո՛ւր է , դժոխք , խայթոց քո : Այսպէս ահա ի վերջոյ կը պարտի անիրաւութիւնը եւ զօրացեալ կը յաղթէ արդարութիւն մշտնջենաւոր թագաւորութեամբ :

Թող տանք այժմ բուն Արդարութիւն որ է Քրիստոս . Թող տանք նա եւ բուն անիրաւութիւնը , որ է դիւապետ սատանայս երկու ներհակալարժ դաստիարակաց դպրոց մտնող աշակերտաց վրայ խօսիմք :

Արդարեւ այս երկու հակառակ դասասաց հեղինակները ահագին զինուորական դպրոցները բացերեն աշխարհիս վրայ , առաքինութեան կամ արդարութեան դպրոց մտնող աշակեր-

տաց թիւը խիստ նուազ է, մոլութեան կամ անիրաւութեան
 դպրոց մտնող աշակերտները յոյժ բազմաթիւ են : Արդարու
 թիւերը իբրեւ վեհապոյն եւ հոգեհանձար վարժապետ իր
 տուրք մատեան աշակերտներուն ձեռք տուած կաւանդ է ի-
 րենց պարկեշտ եւ համեստագոյն դասերը : Ի՞նչ, Աստուած-
 պաշտութիւնը . երկիւղ, ընկերօրութիւն, ողորմածութիւն,
 հեզութիւն, հոգեով աղքատութիւն, համբերութիւն, արիւ-
 րան խաչաքարծութիւն . եւ այլ ուրիշ առաքինական դասերը :
 Իսկ անիրաւութիւնը իբրեւ բարձրամիտ, գոռոզ, բիււաշնորհ
 դասախօս իր ընդարձակ դժոխաշէն ճեմարանին դահ բազ-
 մելով, իւր բոլոր դասերը արդարութեան հակառակ կը սորլի-
 ցրնէ : Ի՞նչ, անաստուած կուսմորութիւն որ գիււապաշտութիւն
 ըսել է, եղբայրատեցութիւն, ագահ սրծաթափութիւն,
 հպարտութիւն, նախանձ, անհաշտ ստեղծութիւն, անձնահաճ
 փառասիրութիւն, արիւննահեղ բարկութիւն, խորամանկ խա-
 բէութիւն, չարաչար զրպարտութիւն, քսու բանասարկութիւն,
 շնաբարոյ հեշտութիւն, ապաշնորհ ապերախտութիւն, աներ-
 կիւղ սպտոմարութիւն յԱստուծոյ եւ այլ բազմատեսակ եւս
 չարագոյն դասերը իր դժոխագիր մատենէն աւանդ ելով :

Այսպէս ահա, երկու դասի աշակերտներն ալ այլատարազ
 գէնքերով զինուորուած, գունդ գունդ բանակներ կը կազ-
 մեն, իրարու գէմը ճակատ կը յօրինեն, խրախուսական փո-
 ղեր կը հնչեն, արձագանդ լեռները կը թնդացնեն, կը զսր-
 նեն ու կը զարնուին այնչափ, մինչեւ աշխարհիս ընդարձակ
 դաշտերուն երեսը կարմիր ճաղաղիւններով կը ներկուի :

Անիրաւութեան նախկին յառաջագէժ աշակերտն Այսին
 սաստիկ առեւութեան կիրքերով զինուորած իւր անմեղ հայա-
 զատին մըս կը յարձակի . (որ արդարութեան դպրոցին մէջ
 Աստուածապաշտութեան դասը քաջ սորվելով իւր գեղեցիկ ու
 մատաղ դուռները անոր կը նուիրէր) ու նախանձու կրակով
 մտուած սուրը իր համարիւն եղբօր սիրտը կը թափանցէ . գե-
 տինը կը փռուի արդարութեան աշակերտն Աբէլը . իր շունչն
 ու ձայն կը կտրի թէպէտ, բայց արեան շառաչիւն մինչեւ եր-

կինք կեղծ վերին Արդարութիւնը մեծ ցատումով իւր բարձրագահ աթոռէն մինչեւ արեան դաշտը կիջնայ, եւ սպառնալից ձայնով կը կանչէ, Վային Վային, ո՛ւր է Աբէլ եղբայրք: Սը պապանձի անիրաւութեան աշակերտն, ու յետոյ յանդուգն պատասխան տալով կը պատժի չարաչար:

Անիրաւութեան երկրորդ դատու աշակերտները, Վայնազարմ գստերայ համար կըսեմ, որոնք անպարկեշտ շռայլական զարդերով զինուորած կը յարձակին Սեթածին արդար ու համեստագոյն որդւոյ վրայ եւ անոնցմէ մեծ մասն ՚ի մահ կը վիրաւորեն. եւ այնչափ կը զօրանան անիրաւութեան աշակերտները, մինչեւ իսպառ բառնալ կուզեն արդարութեան աշակերտները աշխարհիս վրայէն: Վերին Արդարութիւնը կրկին անգամ կը սրտմտի եւ իւր հաւատարիմ աշակերտն Նոյ իր ընտանեաց հետը չնչին փայտով կը փրկէ եւ անիրաւութեան զինուորող ամբարիշտները ջրատոյզ կորստեամբ կը ջնջէ:

Անիրաւութեան երրորդ դատու աշակերտները բռնաւորութեան գէնքերով սպառազինած՝ արդարութեան օրինաց հետեւող ամբողջ ժողովուրդ մը Աբրահամեան սերնդոց Եղիպտոսի բանտին մէջ կը չարչարեն: Բայց վերին Արդարութեան զօրավար քաջն Մովսէս հրաշալի այցելութեամբ այս բանտիս մէջը կիջնայ ու վեց հարիւր հազար աշակերտակիցներ կազատէ այն խաւարչտին բանտէն ու մինչեւ Սինա լեւը կառաջնորդէ: Սը ցանու ժարաւօն բռնակալ վարժապետն անիրաւութեան, արդարութեան ետեւէն վազելով կուգէ վերտին բռնակալել, բայց կարմիր ծովը իբրեւ դատաստգ կամ արդարութեան վրէժխնդիր դիմաց կեղծ, ալիքները քաջամարտիկ զինուորի մը պէս կը մարտնչին մինչեւ անիրաւութիւնը իր զինուորներով անդունդներու բանտի մէջը կիջուցանեն: Արդարութիւն իր յաղթանակ տնկելով կ'երգէ, «Օրհնեցուք զտէր, իսկ անիրաւութիւնը կը սուղանի իսպառ ծովու անեղանելի բանտին մէջը: Տէրն արդար է եւ իր դատաստան ուղղութեամբ կը տեսնայ ու այսպէս կը խորտակէ զօրք անիրաւութեան:

Այս տեղը կը թողու՞մք սուրբ գրոյց այն բազմագլխի օրինակները, որոնց մէջը կը տեսնուի Արդարութեան ու անիրաւութեան զինուորաց մեծամեծ կռիւներու հանդէսը. բանի մը օրինակներ ալ մեր Հայկապէս մատենադարանէն բերելնք. որոնք թերեւս աւելի դիւրամուտ ըլլան հայալուր տկաննայ :

Անիրաւութեան բուռն կրից աշակերտող երկու վտառագոյն զօրապետները Արշակ ու Պապ, երկուքն ալ 'ի միասին գիտես թէ մի եւ նոյն դասի ընկեր ըլլալով՝ անիրաւութեան յոռի դատախարակէն լաւ կը թուեցան մոլեկան ու զազրագործ սխտին սովորութեան մէջը եւ նոյն ախտով զինուորած սկսեցին պատերազմ բանալ՝ բոլոր արդարութիւն ղգեցած աշակերտի մը դէմ. մեծ Ներսիսին համար կըսեմ, որուն եկեղեցաշէն առաքինութեան հանդէսը հետեւեալ թուով պիտի ծառեմք. բայց միայն սա կը յիշեմք այս տեղը, որ Հայաստանեայց մեծ բարերարը, իւր ամէն երախտեաց փոխորէն մահալից թիւնով լեցուած բաժակ մի միայն կընդունի իբրեւ հատուցումն իւր շնաշխարհիկ գործոց՝ անիրաւութեան աշակերտի մը ապերախտ ձեռքէն : Պաշտպան Արդարութիւնը գիտես թէ վրէժխնդրութեան աշունները կը գոցէ առ ժամանակ մը եւ թող կուտայ որ Ներսիսի նման արդարութեան յառաջադէմ աշակերտ մը Հայաստան երկրէն բարձուի եւ անիրաւութիւնը իբրեւ յաղթող տիրէ :

Բսութեան, բանասիրութեան, նախանձու եւ մանաւանդ փառասիրութեան ղէնքով վստուած՝ անիրաւութեանը նենգաւոր աշակերտը Բատ Սահառունին, բաներթուել մանուկ թագաւորին վարազգատայ տկանջներուն օձի նման կը խօսի եւ բաջին Մուշեղայ հայրենեաց ազատութեան համար եռացող նուիրական արիւնը խրախճանալից սեղանին վրայ թափել կուզէ : Ար զարմանայ Մուշեղ եւ իր վերջալոյս մարած աշունները կը դարձունէ դէպ 'ի վարազգատը եւ այս բան միայն կը խօսի. « 'ի վերայ բաղում վաստակոց արեան եւ քրտան եւ սլաքօքն զբիրտն ջնջելոյ, այս հատուցումն եղեւ ինձ » : Այս կը պատասխանէ Բատ Սահառունին ու մէկէն իւր անի-

բաւոյթեան նրանք քաշելով Մուշեղայ պարանոցին վրայ կը շողացուցանէ : Աւանդ, այսպէս կը մեռանի հայրենեաց մեծ երախտաւորն Մուշեղ զօրաւարը ու անիրաւ փառաւորութեամբ կը յափշտակէ անոր պատիւը բանաւարկու եւ չարախօս Բատ նախարար :

Կը թողում այս տեղը մեծն Տրդատ, որ Աստուած պաշտուութեան ու արդարութեան հաւատարիմ աշակերտ ըլլալով՝ Սուրբ կրօնին զէնքով վառուած զինեցաւ անիրաւութեան դէմը, այն է տիրադրուծ ամբարշտ նախարարաց, եւ Ներսիսէն յառաջ նոյն մահուան թիւնալից բաժակը իւր անիրաւ սենեկապետին ձեռքէն խմեց ու մեռաւ :

Այսչափ ճշգրիտ օրինակներէն կարծեմ, ուշիմ ընթերցող, բարւոք միտ առիւր, որ արդարութիւն եւ անիրաւութիւն աշխարհիս վրայ իրարու դիմաց ահագին բանականեր կազմած անդադոր կը կռուեն : Բայց արդեօք մինչեւ ցկատարած աշխարհի պիտի տեսնե՞նք . այո՛ քանի որ այս երկու հակաժողով գըպրոցներուն աշակերտները դաս դաս կը թուելով հակառակ զէնքերով կը զինուորին՝ հարկաւ կռուին ալ վախճան չըլլար . սակայն ինչպէս որ վերը գրեցինք արդարութիւն միշտ անպարտելի կը մնայ իր ստիճանութիւն ընտիր զօրքերով : Այս վրձնոյս համար Սողոմոնն ալ երաշխաւոր կըլլայ իր խմատութեան գրքին մէջը . « Զի արդարութիւն մշտնջենաւոր եւ անմահ է » : Թէպէտ իր սակաւադիւտ ընտրեւագոյն աշակերտները անիրաւութեան կողմի բանակէն իբրութե՛ յաղթուելով անզգամներուն աչքին սոյնպէս կարծուեցան թէ մեռան :

Անիրաւութեան կամ մոլութեան յոյսն անսխտան է, զուր տեղ կաշխատի, զուր տեղ իր զէնքերը կը սրբէ արդարութիւնը կամ առաքինութիւն վիրաւորելու համար : Օգ չի վերաւորիր, նմանապէս Ջուրն ալ չի փողոտիք . որչափ կուգէ թող իրեն սուր շողացնէ Ջուրնին վրայ . վերջապէս իր սուրը պիտի ժանգոտի ու բթանայ :

Ուրեմն զուր տեղ կը ջանայ մոլութիւնը առաքինութեան

յաղթել . վասն զի առաքինութիւնը առաքինութեամբ կը
յաղթուի ինչպէս որ քաջ կը խօսի Կիկերոն . « Քաջ վազողի
մը ետեւէն՝ քաջ վազող պէտք է որ հասնի » , որով կիմացնէ
պարտաւելով . յիմար մոլութիւն, ինչո՞ւ յամրաշարժ ու կաղ
ոտքովդ առաքինութեան ետեւէն կերթաս, կուզե՞ս հասնել,
վազէ . այսինքն մէկ դի գիր մոլութեան կաղութիւնը . որ
պէս զի առաքինի դործոց առոյգ ոտքով կարենաս հասնել
առաքինութեան :

Զուր տեղ կըթռչտի անմիտ թիթեռնիկ արդարութեան
կամ ճշմարտութեան ճրագին ճառագայթներու բոլորակը .
թէեւ կը յաջողի երբեմն թեւերուն ստատկութեամբ զտը
նուելով ճրագին լոյսը մարել . բայց վերջապէս իր թեւերն ալ
կայրին : Աս վերջին ըսածիս միտքը լու կը բացատրէ հետեւ
եալ Արմուեան ձայունն առակը :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԿ .

Ճրագին կենաց թշնամի,
որ թիթեռնիկ կ'անուանի .
սովորութիւն է ասոր,
ուր որ ճրագի լոյս տեսնայ
երթայ ու հետ մաքառի :

Օր մը ծեր պառաւուն մէկ,
ճրագ փառած իրեն դէմը .
գիշերը նստած կտր կը նէր,
ակնոց աչքին էր դրեւր,
դ երձան, ասեղ բըռնած ձեռքը :

Դատ կըջանայ ժամու մը շափ,
դ երձան ասղին անցունել .

քայց ի՞նչ օգուտ, խեղճ պառաւ
 ճարը հատած կը ձգէ վար,
 կարծէ թէ աչք չի տեսնար :

Մէյմըն ալ ասանկ յուսահատ
 վեր կը նայէ դէպ ՚ի ճրագ .
 կտեսնայ որ ի՞նչ, ճրագին դէմը,
 Թռչնիկ մը բացած թեւեր
 լուսոյն բոլոր կը խաղայ :

Կըսէ իրեն սուր ձայնով .
 « Ի՞նչ անիրաւ չարագործ .
 դ՞ու ես իմ կարս խափանօղ,
 ճրագիս իմ հետ մաքառօղ .
 աչքիս լուսոյն նըռազօղ :

Այս չարութեան, որ առիթ,
 եղար դու, չար թիթեռնիկ,
 արեւէդ խէր չի տեսնաս,
 որչափ որ կստ կենդանի,
 միշտ իմ անէծքս քեզ հասնի :

Թիթեռն երբոր կը լսէ,
 գիտես թէ նոր կը կատղի,
 մէկէն թեւերը կը լարէ
 ուժգին ՚ի լոյս կը դիմէ .
 հա՛ հա՛ եկի կը կանչէ
 որ կեանքդ բառնամ յարեւէ :

Աս կըսէ ու կը դիմէ,
 ինչ պէս Պարսից սեւագունդ,
 մէկէն գիմաց կելէ բոց,
 կայրէ իսպառ զթեւս գոռոզ :

Վար կիյնայ կը թաւալի .
 խեղճ թիթեռնիկն այն տխմար .
 լուսոյն հետը « Ի՞նչ մաքառէ,
 վերջը կըլլայ խայտառակ :

Լոյս ճրագին համասփիւռ
Ճշմարտութեան է պատկեր .

անիրաւքն են մաքառող
միշտ ընդ լուսոյն եւ արգել :

Պառաւն այն ծեր հին աւուրց
արդարութեան ասի մայր ,
որ 'ի սրտի ճշմարտին ասղամբ
խղճին առնէ զկար :

Անիրաւ դու անիրաւ ,
մի զբեզ կալցես յաղթական ,
ճշմարտութեան բոց հրոյն
զանձըդ առցէ 'ի ճարակ :

Ե . ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՅ

ՆԱՄԱԿ

Ս'եծարգոյ եւ ուսումնասէր Յակովբ Միրզայեան Ս'ելիք
Յակովբեանց Ազնուարարոյ Հայկազն Երիտասարդը բանի մը
նամակները ուղղերէ մեզ . որոնց մէջը իր աշխոյժ եռանդոտ
հայրենասիրական ոգւոյն բնական ձիրքեր կը փայլին . աւերորդ
միայն այն մասերն են , որ մեր նուաստախոհ անձին դուրս-
թեան կը վերաբերին : Ուստի յօժարութեամբ կը հրատարա-
կեմք այս իր առաջին նամակը . որպէս զի Տփլիսոյ Ներսիսեան
մեծահռչակ Դպրոցին յառաջադիմութեան պատիւ ընծայէ
ու միանգամայն նորին արդիւնաւոր արգասեաց վկայ ըլլայ :
Վասն զի յիշեալ հայրենասէր անձն նոյն դպրոցին մէջը

Հայկականին հետը ուրիշ քանի մը լեզուները սորվելով այժմ իր հայրենիք դարձեր է . որէ Սալամաստ նահանգ . ու մեծափայլ ջանքով իր հայրենակիցները յորդորելով կաշխատի ուսման սէրը անոնց սրտին մէջը տարածելու . որով կը յուսանք , որ պարսկահայոց սահմաններն ալ գիտութեան կայծերը հետզհետէ արծարծին :

ԲԱՐԵՂԱՆ ՎԱՆԱՀԱՅՐ

ՄԿՐՏԻՉ Վ. ԽՐԻՄԵԱՆ

Լին զուարճալի ժամանակն՝ երբ մտած Տփիսիոյ Ռուսաց Կայսերական Հաճախարանի մէջ՝ եռանդագին փափազանք փունջ կը կապէի երգներանդ ծաղկներից . յանկարծ արագ թեւօք սլացեալ իջան Տփիսիոյ մեծ գրատունն Գերլմաստ Հօրդ Հրաւիրակներն : Ո՛հ , որպիսի սաստիկ մագնիսական ձգողութեամբ գրաւեցին նոքա մատաղ սիրտս . որպիսի քաղցր ու ակործ համ ունեցան իմ տկար ակործակիս : Յիւրաւի , ակործելի էին նոքա . նոցա մէջ փայլում էր մեծ եւ հարուստ տաղանդ , վառեալ հրով ազգասիրական :

Իայց այժմ ուրախութեանս սահման անբաւ է . երբ լըսեցի՝ Սրբութիւնդ թող տուած միանգամայն բոլոր քաղաքական յառաքներն , պատիւներն՝ եւ զուարճալի կեանքն՝ եկել էք դուրս բերելու ձեր խղճալի հայրենակիցք տգիտութեան խաւարից . լուսաւորելով նոցա միտքն պէս պէս իմաստութեամբ եւ վառելով նոցա սրտի մէջ Հուր Սիրոյ :

Ղշմարիտ , մեծ նեղութիւն , մեծ ջանք հարկաւոր են ձեք այս առաքինական եւ ազգօգուտ տնօրէնութեան համար . ընդ այսմ ամենայնի՝ պէտք է հաստատ մտօք եւ համբերութեամբ ընդունիլ ամենայն տեսակ վշտեր , տառապանքներ , հայհոյանքներ եւ այլն : Դուք միանգամայն պիտի վեր առնէք Քրիստոսի Սուրբ Խաչն եւ հեռեւիցէք նորան . ինչո՞ւ

պիտի վախենաք նորանցից՝ որք մի միայն մարմինն եւ եթ կա-
րող են սպանանել . այլ հոգուն չունին իշխանութիւն վնաս
տալու :

Միտքներդ բերեցէք , մեր փրկչին եւ նորա աշակերտաց
վշտակրութիւններն . թէ քանի անտանելի չարչարանքներով
կարողացան փարատել հեթանոսական խաւարն եւ սփռել
լոյսն Բրիտտոնէական . քանի մեծ դժուարութեամբ կարողա-
ցան արմատախիլ առնել Հրէից նախապաշարումն եւ հաս-
կացնել նրանց նոր օրինաց ճշմարտութիւնն :

Չեր վարագայ վանքում արած մեծ անօրէնութիւններն
լսելով՝ զրեցի իմ Տփխիսեցի թղթակիցներուս , որք ամենե-
քեանք ուրախութեան ոգեւով լցված՝ յայտնում են իւրեանց
սրտի հրճուանքն : Որոնց մինն այս հատուածն է գրում .
« Ընթերցայ մին քանի հրճուողական տողադ 'ի մասին Արծիւ
Վասպուրականի : Եւ յոյժ ուրախացայ նորա Ազգին յառա-
ջագիմութեան համար ունեցած մեծ ջանքի վրայ : Թէպէտ
եւ յառաջագոյն Հայոց լրագրութեամբ տեղեկացած էի .
բայց չ'գիտէի նորա գլխաւոր նպատակն : Մեզ գովասանել
հարկաւոր չէ այն հայրենասէր անձին . մի միայն պիտի
օրհնենք եւ աղօթենք նորա թանկագին կենաց համար » :

Հոգեւով կը ցանկայ նուաստս նամակակից լինել Սրբու-
թեանդ հետ եւ գիտել ձիր նորակառոյց Ճեմարանի յառա-
ջագիմութիւնն : Որով յատկապէս յոյժ եւ յոյժ պիտի ուրա-
խանայ տխուր սիրտս , որ բազմաց հետէ՝ տեսնելով Ազգի
ցաւալի վիճակն՝ մեծ սգոյ , մեծ ցաւակցութեան մէջ է :

Մեամ բարեմալթ Վտան թանկագին կենացդ ուրպէս
այժմ՝ նոյնպէս եւ յամենայն ժամանակի :

ՅԱՎՈՎԲ ՄԻՐԶԱՅԵԱՆ
ՄԵԼԻՔ ՅԱՎՈՎԲԵԱՆ

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԳՈՐԾԱԿԱԼԷՔ.

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ, Մկրտիչ Տ. Ատոմեան 'ի գրանոցի վասպուրական
Արծուոյն :

ԿԱՐԻՆ, Խաչատուր Խան Տ, 'Ներսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ, Մ, Ղարիպճան Աղա Մ, Հողիկեանց :


ՏՐԱՊԷՉՈՆ, Աղաճան Աղա Յովհաննիսեան :

ՊՕԼԻՍՊ, Յակովբ Աղուանեան վանեցի 'ի Պալմաճի խան :

ԶՄԻՒՌԻՆ, Պ, Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցոյ :

ԲԵՐԻԱ, Յովհաննէս Աղա Միսաքեան :

ՍԱԼԱՄԱՍՏ, Յակովբ Մկրդայեան Մէլիք Յակովբեանց, մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :



ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի վան, 'ի Կարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2 ու կէս
Օսմանցիքսան ղուրուշնոց արծաթ Մէճիտիէ :

Ի Պօլիս, 'ի Զմիւռլին, 'ի Բերլա, երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան, այսինքն 'ի Տփլիս, յԱ-
ղէքսանդրպօլ, 'ի Դավլէժ եւ այլն, չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 6 ղուրուշ : Ճանապարհին ծախքը
խմբադիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԱՇԻՆ ՀԱՐՑ

Արիւսիէս, Վրբանէս, Գրիգորի, Յովի, Եւ Դանիէլ
որդիք է ի նոսրանս Լուսաւորէան 83

ՀԱՆԻԻՍԱՐԱՆ, ՀԱՅՐԵՆԱՇԻՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ
Նախագահ Արքանի թագաւոր Արսայ Հայոց Պարոյր 92

ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ
Մայրաքաղաք Դիւսապանայ Վարդ :
Եկեղեցիք (Լարնասիւն-իւն) 95

ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՅ
Հանդէս Դարայ Արարուն-իւն է Անիւսոս-իւն 99

ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՅ
Նախ. Յովիւք Միւրայեան Մէլք Յովիւքեան 108